



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2004թ. հունվարին /վերլուծություն/

2004թ. հունվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 5758 գործարքներ, որոնց քանակը 2003թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 27.4%-ով, իսկ 2003թ. հունվարի համեմատ աճել՝ 69.0%-ով:

2004թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը..



2004թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2588 օտարման գործարքների 92.2%-ը կազմել են առուվաճառքները, 7.4%-ը՝ նվիրատվությունները և 0.4%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 42.2%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 41.7%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2004թ. հունվարին, 2003թ. հունվարի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 51.0%-ով, իսկ 2003թ. դեկտեմբերի համեմատ՝ նվազել 23.4%-ով: 2004թ. հունվարին Երևան քաղաքում անշարժ գույքի 973 առուվաճառքի գործարքների 59.5%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում, 2003թ. հունվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 33.7%-ով, իսկ 2003թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 29.6%-ով:

2004թ. հունվարին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների վաճառքի և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

/1 ԱՄՆ դոլարը 2004թ. հունվարին համարժեք է 568.44 դրամի /

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. հունվարին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		հունվար 2003թ.	հունվար 2004թ.	դեկտեմբեր 2003թ.
Կենտրոն	250.0-970.0	336.9	423.2	415.4
Արաբկիր	200.0-560.0	232.2	317.2	309.8
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	133.6	198.2	195.2
Նոր-Նորք	115.0-250.0	116.8	159.3	153.5
Ավան	120.0-190.0	107.5	157.4	154.3
Էրեբունի	120.0-300.0	122.0	168.5	166.6
Շենգավիթ	120.0-250.0	121.5	169.2	164.2
Դավթաշեն	130.0-260.0	131.2	201.1	198.1
Աջափնյակ	120.0-250.0	116.9	179.8	175.9
Մալաթիա-Սեբաստիա	120.0-250.0	118.0	166.2	161.2
Նուբարաշեն	65.0-110.0	48.2	71.0	70.8
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	<b>65.0-970.0</b>	<b>144.1</b>	<b>201.0</b>	<b>196.8</b>

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. հունվարին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 2.1%, իսկ տարեկան աճը՝ 39.5%, ընդ որում ամսեկան միջին աճի տեմպի ցուցանիշը կազմել է 0.008:

2004թ. հունվարին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 388 բնակարաններ, որոնց քանակը 2003թ. հունվարի համեմատ աճել է 42.1%-ով, իսկ 2003թ. դեկտեմբերի համեմատ՝ նվազել 18.3%-ով:

2004թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. հունվարին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			հունվար 2003թ	հունվար 2004թ	դեկտեմբեր 2003թ
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	60.2	63.0	62.9
	Ապարան	18.0-40.0	26.7	27.4	27.4
	Թալին	18.0-40.0	22.5	25.2	25.2
Արարատ	Արտաշատ	22.0-88.0	51.8	54.8	54.8
	Մասիս	20.0-90.0	53.3	54.5	54.4
	Վեդի	20.0-45.0	29.1	31.7	31.7
	Արարատ	22.0-50.0	29.9	31.6	31.6
Արմավիր	Վաղարշապատ	35.0-102.0	69.6	84.9	84.8
	Արմավիր	21.0-58.0	40.9	45.8	45.8
	Մեծամոր	17.0-50.0	30.0	30.9	30.9
Գեղարքունիք	Սևան	20.0-50.0	30.0	30.7	30.7
	Գավառ	20.0-50.0	29.2	30.5	30.5
	Մարտունի	18.0-38.0	27.2	29.7	29.7
	Վարդենիս	10.0-21.0	16.4	17.3	17.3
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	59.1	62.1	62.1
	Ստեփանավան	20.0-48.0	29.5	33.4	33.4
	Սպիտակ	17.0-40.0	20.8	24.1	24.1
	Ալավերդի	15.0-40.0	24.3	25.6	25.6
	Տաշիր	15.0-28.0	18.3	19.4	19.4
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	70.0	84.4	84.3
	Նոր Հաճն	35.0-75.0	48.5	52.3	52.3
	Բյուրևան	15.0-45.0	34.3	35.2	35.2
	Եղվարդ	28.0-55.0	39.0	40.7	40.7
	Հրազդան	18.0-55.0	29.0	31.1	31.1
	Ծաղկաձոր	22.0-95.0	72.5	75.8	75.8
	Չարենցավան	13.0-55.0	29.6	31.1	31.1
Շիրակ	Գյումրի	30.0-100.0	63.1	72.1	72.0
	Արթիկ	17.0-45.0	24.4	25.3	25.3
	Մարալիկ	15.0-33.0	22.3	23.7	23.7
Սյունիք	Գորիս	21.0-45.0	27.8	29.7	29.7
	Կապան	18.0-52.0	26.7	29.5	29.5
	Սիսիան	17.0-37.0	26.4	27.6	27.6
	Մեղրի	18.0-58.0	24.9	25.2	25.2
	Քաջարան	13.0-30.0	17.0	18.5	18.5
Վայոց Ձոր	Վայք	15.0-48.0	32.4	35.4	35.3
	Եղեգնաձոր	20.0-58.0	46.1	46.9	46.9
	Ջերմուկ	18.0-50.0	38.9	41.2	41.2
	Դիլիջան	15.0-54.0	33.9	36.2	36.2
Տավուշ	Իջևան	23.0-60.0	39.6	40.4	40.4
	Բերդ	15.0-43.0	27.9	29.3	29.3
	Նոյեմբերյան	15.0-45.0	26.5	26.8	26.8

2004թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների ամսեկան միջին գների էական աճ չի արձանագրվել /0.04%/, իսկ տարեկան աճը կազմել է 7.6% :

2004թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 357 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 72, մյուս մարզերում միասին վերցրած՝ 285: 2003թ. դեկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 35.3%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 45.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 32.3%-ով: 2003թ. հունվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 46.3%-ով, ընդ որում Երևանում՝ 14.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 57.5%-ով:

Երևան քաղաքի համայնքներում 2004թ. հունվարին վաճառված անհատական բնակելի տների առուվաճառքների պայամանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004 թ. հունվարին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		հունվար 2003թ.	հունվար 2004թ.	դեկտեմբեր 2003թ.
Կենտրոն	255.0-990.0	340.0	437.4	430.1
Արաբկիր	205.0-580.0	235.0	318.7	314.9
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	136.0	200.1	198.1
Նորք-Մարաշ	120.0-340.0	275.0	317.4	314.6
Ավան	125.0-200.0	109.0	159.6	152.1
Էրեբունի	130.0-320.0	124.0	169.8	163.7
Շենգավիթ	120.0-260.0	123.0	170.1	165.9
Դավթաշեն	140.0-260.0	133.0	198.0	196.0
Աջափնյակ	125.0-230.0	118.0	180.0	172.3
Մալաթիա-Սեբաստիա	125.0-250.0	120.0	167.7	160.9
Նուբարաշեն	65.0-110.0	50.0	73.9	73.6
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>65.0-990.0</b>	<b>160.3</b>	<b>217.5</b>	<b>212.9</b>

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. հունվարին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 2.2%, իսկ տարեկան աճը՝ 35.7%:

Մյուս մարզերի քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայամանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. հունվարին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			հունվար 2003թ.	հունվար 2004թ.	դեկտեմբեր 2003թ.
Արագածոտն	Աշտարակ	35.0-100.0	79.8	83.1	83.0
	Ապարան	20.0-55.0	36.5	38.8	38.8
	Թալին	15.0-40.0	26.7	28.1	28.1
Արարատ	Արտաշատ	28.0-85.0	60.2	61.9	61.9
	Մասիս	27.0-88.0	59.9	62.6	62.5
	Վեդի	25.0-60.0	34.7	36.3	36.3
	Արարատ	25.0-60.0	34.0	37.5	37.5
Արմավիր	Վաղարշապատ	50.0-110.0	69.6	89.9	89.8
	Արմավիր	35.0-90.0	48.4	52.5	52.4
Գեղարքունիք	Սևան	25.0-60.0	35.3	36.4	36.4
	Գավառ	25.0-65.0	38.3	39.9	39.9
	Մարտունի	20.0-55.0	32.5	33.9	33.9
	Վարդենիս	15.0-45.0	19.7	21.3	21.3
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	64.6	69.1	69.0
	Ստեփանավան	20.0-50.0	31.5	33.7	33.7
	Սպիտակ	17.0-50.0	24.0	24.1	24.1
	Ալավերդի	18.0-50.0	25.9	25.9	25.9
	Տաշիր	15.0-30.0	18.8	19.9	19.9
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	88.8	92.7	92.6
	Նոր Հաճն	35.0-80.0	52.6	54.2	54.2
	Բյուրևան	15.0-50.0	36.2	38.2	38.2
	Եղվարդ	23.0-70.0	44.9	47.3	47.3
	Հրազդան	25.0-65.0	38.0	40.3	40.2
	Ծաղկաձոր	45.0-110.0	82.6	85.4	85.3
	Չարենցավան	25.0-50.0	34.0	33.4	33.4
Շիրակ	Գյումրի	40.0-110.0	85.7	91.1	91.0
	Արթիկ	18.0-55.0	26.0	28.7	28.7
	Մարալիկ	15.0-45.0	22.8	23.9	23.9
Սյունիք	Գորիս	22.0-65.0	30.3	31.7	31.7
	Կապան	25.0-55.0	28.7	31.1	31.1
	Սիսիան	18.0-50.0	26.7	28.7	28.7
	Մեղրի	18.0-58.0	25.1	28.2	28.2
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	34.6	37.0	37.0
	Եղեգնաձոր	20.0-65.0	47.1	49.3	49.3
	Զերմուկ	25.0-60.0	41.2	43.4	43.4
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	37.7	39.2	39.2
	Իջևան	30.0-70.0	39.5	41.2	41.2
	Բերդ	20.0-50.0	29.6	30.9	30.9
	Նոյեմբերյան	15.0-45.0	30.6	30.8	30.8

2004թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների ամսական էական աճ չի արձանագրվել /0.05%/, իսկ տարեկան աճը կազմել է 6.1% :

Ընդհանուր առմամբ, 2004թ. հունվարին հանրապետությունում օտարվել են 378.75 հա /այդ թվում 106.63 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 233.62 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողեր: Ընդ որում, 373.84 հա հողերի /այդ թվում 105.93 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից

231.65 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Օտարված 4.91 հա ընդհանուր մակերեսով հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ /այդ թվում 0.70 հա Երևանում/, որից 1.97 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքների առավել մեծ ծավալներ են արձանագրվել Կոտայքի մարզում՝ 63.80 հա, որից 49.09 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2004թ. հունվարին մարզերում վաճառված հողերի /բացառությամբ արդյունաբերության նշանակության հողերի/ միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/		հասարակական կառուցապատ.				բնակելի կառուցապատ /տնամերձ/		հասարակական կառուցապատ.	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	35	3.40	62	69.72	0	0.00	30	2.49	12	2.50
Արագածոտն	4	46.50	1	0.08	2	0.41	15	8.56	15	1.74	0	0.00
Արարատ	4	13.27	66	7.99	1	2.20	66	28.26	25	2.17	0	0.00
Արմավիր	0	0.00	14	0.70	2	0.31	44	28.27	9	0.83	1	0.08
Գևարքունիք	0	0.00	10	1.20	0	0.00	1	1.45	6	0.65	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	15	10.64	9	1.13	1	0.01
Կոտայք	7	5.55	30	2.92	2	0.63	92	43.54	37	4.29	4	2.54
Շիրակ	0	0.00	0	0.00	0	0.00	30	34.42	1	0.01	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	4	5.07	0	0.00	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	13	1.63	2	0.23	11	3.58	0	0.00	0	0.00
Տավուշ	1	1.20	0	0.00	2	0.02	2	1.34	3	0.18	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>16</b>	<b>66.52</b>	<b>169</b>	<b>17.92</b>	<b>73</b>	<b>73.52</b>	<b>280</b>	<b>165.13</b>	<b>135</b>	<b>13.49</b>	<b>18</b>	<b>5.13</b>

2004թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են հողերի 708 առուվաճառքի գործարքներ /այդ թվում վարձակալության իրավունքի առուվաճառքի 2 գործարքներ Երևանում/, որից 296-ը՝ գյուղատնտեսական նշանակության, 397-ը՝ բնակավայրերի, 15-ը՝ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ:

2004թ. հունվարին հողերի առուվաճառքներից 160-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 5-ը Երևանում /0.75 հա/, իսկ 155-ը մյուս մարզերում /75.09 հա/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 14-ը միավորը հանդիսացել է գյուղատնտեսական նշանակության /56.83 հա/, 137-ը՝ /14.79 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/, 7-ը՝ հասարակական կառուցապատման /1.01հա/ և 2-ը՝ արդյունաբերական օբյեկտների /3.21 հա/ հողեր:

2004թ. հունվարին հանրապետությունում վաճառված արդյունաբերական օբյեկտների 15 միավոր հողերից 2 միավորը գրանցվել է Կոտայքի մարզում /4.33 հա/ և 13-ը՝ Երևանում /27.43 հա/:

2004թ. հունվարին, հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 296 գործարքներ, այդ թվում աճուրդով 14, դատարանի վճռով 4 և ուղղակի վաճառքով 2 գործարքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի և դատարանի վճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսացող ցյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող ցյուղատնտեսական նշ. հողերի առուվաճառքների				
	Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	4	46.50	193.0	193.0	193.0	9	3.10	840.0	7600.0	2705.0
Ապարան								130.0	1150.0	340.0
Թալին						6	5.46	200.0	1680.0	370.0
Ծաղկահովիտ								170.0	2100.0	270.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	2	4.50	1690.0	1690.0	1690.0	26	8.92	740.0	10000.0	2050.0
Մասիս						16	7.60	400.0	5600.0	1115.0
Վեդի	1	0.30	54.0	54.0	54.0	24	11.73	450.0	7200.0	1310.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						10	8.49	650.0	4650.0	1290.0
Բաղրամյան						5	6.54	130.0	1000.0	470.0
Վաղարշապատ						25	8.55	980.0	11150.0	2460.0
<b>Գևարգունիքի մարզ</b>										
Գավառ								420.0	1100.0	650.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի								100.0	4000.0	650.0
Սևան								100.0	1000.0	385.0
Վարդենիս						1	1.45	60.0	1180.0	250.0
<b>Լոռու մարզ</b>										
Այվերդի						5	5.99	360.0	5500.0	880.0
Գուգարք								500.0	6000.0	1450.0
Սայիտակ								500.0	3300.0	1025.0
Ստեփանավան						5	1.70	180.0	4000.0	385.0
Տաշիր						5	2.95	100.0	400.0	247.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	6	4.33	130.0	1167.0	538.0	67	20.98	520.0	10100.0	6000.0
Եղվարդ						20	21.40	380.0	6100.0	2820.0
Հրազդան						5	1.16	250.0	4000.0	730.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						22	25.57	550.0	760.0	665.0
Ամասիա						1	2.65	80.0	525.0	195.0
Անի						4	4.00	240.0	800.0	280.0
Աշոցք								60.0	210.0	130.0
Արթիկ						3	2.20	140.0	800.0	260.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս								200.0	1600.0	370.0
Կապան								120.0	2000.0	330.0
Մևրի						2	0.27	400.0	4240.0	850.0
Սիսիան						2	4.80	90.0	1500.0	300.0
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր						5	1.17	260.0	4000.0	1600.0
Վայք						6	2.41	120.0	3400.0	760.0
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ								100.0	2000.0	490.0
Իջևան	1	1.20	504.0	504.0	504.0	1	0.66	530.0	4000.0	1100.0
Նոյեմբերյան						1	0.68	100.0	8340.0	690.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի շուկայական գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի գտնվելու վայրից և հողատեսքերից:

2004թ. հունվարին, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 239 առուվաճառքի գործարքներ, որից 134 աճուրդվաճառքներ են: Հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	1	800.0	312.0	312.0	312.0	13	14960.0	120.0	3800.0	2300.0
Ապարան								120.0	670.0	310.0
Թալին						2	2400.0	78.0	440.0	130.0
Ծաղկահովիտ								78.0	180.0	140.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	66	79888.0	70.0	770.0	123.0	6	5100.0	175.0	2460.0	700.0
Մասիս						13	10300.0	270.0	3680.0	830.0
Վեդի						6	6340.0	115.0	1000.0	515.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						4	4113.0	180.0	2440.0	800.0
Բաղրամյան								120.0	280.0	200.0
Վաղարշապատ	14	7000.0	346.0	364.0	350.0	5	4205.0	280.0	3700.0	1320.0
<b>Գևարքունիքի մարզ</b>										
Գավառ						2	1650.0	180.0	1000.0	550.0
Ճամբարակ								78.0	180.0	140.0
Մարտունի	10	12000.0	66.0	118.0	92.0	4	4810.0	120.0	320.0	240.0
Սևան								120.0	1000.0	250.0
Վարդենիս								78.0	180.0	120.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						1	65.0	78.0	440.0	210.0
Գուգարք								78.0	3800.0	700.0
Սպիտակ								78.0	450.0	160.0
Ստեփանավան						8	11233.0	78.0	340.0	150.0
Տաշիր								78.0	180.0	135.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	5	4163.0	95.0	126.0	114.0	13	13200.0	180.0	4300.0	1480.0
Եղվարդ	25	25000.0	90.0	90.0	90.0	23	28160.0	180.0	3670.0	1720.0
Հրազդան						1	1530.0	180.0	4120.0	1365.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						1	105.9	120.0	2500.0	340.0
Ամասիա								78.0	180.0	135.0
Անի								120.0	430.0	185.0
Աշոցք								78.0	120.0	110.0
Արթիկ								120.0	440.0	190.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս								78.0	670.0	380.0
Կապան								78.0	1000.0	410.0



Մերի								78.0	450.0	230.0
Միսիան								78.0	450.0	230.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	13	16250.0	50.0	195.0	70.0			78.0	990.0	300.0
Վայք								78.0	1000.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								78.0	670.0	170.0
Բջևան						3	1810.0	78.0	1600.0	570.0
Նոյեմբերյան								78.0	670.0	210.0

2004թ. հունվարին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 15 գործարքներ 11.44 հա ընդհանուր մակերեսով, այդ թվում 1-ը՝ Երևանում /1.28 հա/, 1-ը՝ Արագածոտնի /7.00 հա/, 10-ը՝ Արարատի /1.46 հա/, 1-ը՝ Արմավիրի /1.00 հա/ և 2-ը՝ Վայոց Ձորի /0.70 հա/ մարզերում:

2004թ. հունվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 650 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.3%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 36.5%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2003թ. դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 4.3%-ով, իսկ 2003թ. հունվարի համեմատ աճել՝ 97.6%-ով:

2004թ. հունվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 34 բնակարանների, 12 բնակելի տների, 212 հասարակական, 17 արտադրական նշանակության օբյեկտների, 373 հողերի և 2 ավտոտնակների վարձակալության գործարքներ:

2004թ. հունվարին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 27 վարձակալության գործարքների քանակները, 2003թ. դեկտեմբերի համեմատ նվազել են 34.1%, իսկ 2003թ. հունվարի համեմատ՝ 57.8%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. հունվարին հանրապետությունում վարձակալվել են 1090.40 հա ընդհանուր մակերեսով հողեր, որից 25.1 հա Երևանում: Մարզերում վարձակալված հողերից 921.68 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 4.74 հա բնակավայրերի, 96.95 հա արդյունաբերական օբյեկտների, 39.0 հա ջրային, 2.96 հա հատուկ պահպանվող տարածքների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 301.94 հա, որից 298.80 հա գյուղատնտեսական նշանակության:

2004թ. հունվարին համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 110.20 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2004թ. հունվարին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	0	0.00	53	223.19
Արարատ	0	0.00	34	47.68
Արմավիր	0	0.00	14	9.14
Գեղարքունիք	9	58.20	49	240.60
Լոռի	0	0.00	16	131.70
Կոտայք	0	0.00	29	65.51

Շիրակ	3	52.00	3	13.86
Սյունիք	0	0.00	11	25.80
Վայոց Ձոր	0	0.00	6	14.14
Տավուշ	0	0.00	10	39.87
<b>Ընդամենը</b>	<b>12</b>	<b>110.20</b>	<b>225</b>	<b>811.49</b>

2004թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 301 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.2%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. հունվարի համեմատ աճել է 92.9%-ով, իսկ 2003թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 56.9%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 44.3%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /45.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /18.3%/, առանձնատների /17.9%/ և հողերի /9.0%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 150 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 54.7%-ով, իսկ 2003թ. հունվարի համեմատ աճել՝ 64.8%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. հունվարին հանրապետությունում գրավադրվել են 15.14 հա /0.03 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 11.76 հա գյուղատնտեսական նշանակության: Գյուղատնտեսական նշանակության հողերի առավել մեծ ծավալներ են գրավադրվել Արարատի մարզում /4.96 հա/:

2004թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 14 և 7 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.4%: 2003թ. հունվարի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 4.5%-ով, իսկ 2003թ. դեկտեմբերի համեմատ՝ 25.0%-ով: 2004թ. հունվարին մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Սյունիքի մարզում՝ 33.3%:

2004թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1007 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2003թ. հունվարի համեմատ աճել է 2.1 անգամ, իսկ 2003թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 24.2%-ով: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևան քաղաքում /35.6%/:

### ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***